

Եպիսկոպոսը հրաւիրեալին անունն ու ի՞նչ տեսակ նուէր տալը կը նշանակէր:

Հարուստ վաճառականները ինչուան երկու քուման(Toman) կու տան. եւ սպասաւորի մը նուագադոյն տուածը մէկ ոսկի է (օր):

Թոճանն ու ոսկին գրամներուն ցուցակին մէջ բացատրուած են:

Իմ կողմանէ չորս թոճան գրել տուի Եպիսկոպոսին, պայմանով որ յաջորդ օրուան ժամասացութենէն յետոյ աղօթք մը զուրցէին իմ Թաղաւորիս եւ պերճաշուք Օսկէանի Դուքսին համար, որուն պատկանելու պատիւը ունէի»:

ՏԱրթանեանին ժամանակակից, արքայազուն այդ իշխանը, Լուդովիկոս ԺԴ-ին մեղկասէր եղբայրն էր, Անդրիոյ Թաղաւորին պէրասէր Հանրիէթ քրոջը ամուսինը, որ իր անձին չափազանց սիրահարուած ըլլալով, օրն ի րուն շարքով եւ զոհարեղէններով ինքզինքը կը պաճուճէր:

«Եպիսկոպոսը, այս խօսքին վրան, առանց պատասխանելու, Հայրապետին դը-

նաց, որ զայն խիղջն ինծի վերադարձուց ըսելու համար որ Էթէ նոյնիսկ բան մը չտայի, անոնք պարտաւոր էին աղօթելու Քրիստոնեայ արքաներուն ամենաականաւորին, անոր Աւագեղբոր Օսկէանի Դուքսին եւ արքայական համայն ընտանիքին համար:

Եպիսկոպոսը դրի առնելը լմնցուցած ըլլալով՝ խորտիկները վերցուցին տարին. եւ Հայրապետը զոհութեան աղօթքը զուրցեց. որմէ վերջ պտուղները բերին եւ մեծ քանակութեամբ սեխ:

Քիչ մը վերջը երեկոյեան ժամերգութեան զանգակը դարկաւ. որովհետեւ մենք այլեւս Թուրքիոյ մէջ չենք գտնուիր, ուր քրիստոնեաներուն զանգակը չէ արտօնուած. մինչդեռ Պարսից Թաղաւորը ամէն բան անոնց թոյլատրած է. որով Հայերուն բոլոր եկեղեցիները զանգակ ունին, զոր անոնք քրիստոնեայ երկիրներէն բերել կու տան»:

Պոօթ. Լէւոն ԿԻՒՐԵՂԵԱՆ

(Հայրուհակի)

ԷԶԵՐ ՓԱՅՏԱՓՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՐԻԵՍՏԻՅ

ՓԱՅՏԱՓՈՐԱԳՐԻՉ - ԳԾԱԳՐԻՉ

ԲԱՐՄԱՆԴ ԶՈՀՐԱԲԵԱՆ

Իրանի Սպահան քաղաքի պատմական Նոր-Ջուղա արւարձանի հմուտ, ձեւակերպուած եւ վարպետ հայ փայտափորագրիչ - զծագրիչներէ մէկն է Բարսեղ Զօհրաբեանը, որ երեսուն եւ հինգ երկար տարիներ իրեն նւիրել է միայն փայտափորագրութեան արւեստին եւ քանդակել է մէկը միւսից զեղեցիկ զարդանկարներ, որոնք իրենց ինքնուրոյն ոճով, ներդաշնակ կառուցուածքով եւ զեղարւեստական նորութեամբ ընդգծում են նրա արւեստի էութիւնը:

Հայ մամուլը եւ բանասիրական գրականութիւնը, դժբախտաբար, մինչեւ օրս էլ չեն արձանագրել այս ինքնատիպ արւեստագէտի կեանքի եւ գործունէութեան հիմնական դժերը եւ նա համարեա մնացել է անյայտութեան մէջ: Այսօր, սակայն, ժամանակն է, որ ընդգծին նրա արւեստի էական յատկանիշերը:


Կարճ է նրա կեանքի պատմութիւնը: Ծնւել է նա 1873 թւականին Նոր-Ջուղայում՝ մի չքաւոր ընտանիքում: Սոհարար հայրն իր որդու կրթութեան համար զո-



Փայտափորագրիչ՝ Բարսեղ Զօհրաբեան

հում է իր լաւագոյնը: Ուսանում է Նոր-Ջուղայի «Ս. Մինաս» եկեղեցու դպրո-

ցում, ժամանակի յայտնի գրաբարագէտներ՝ Աւետիք, Մկրտիչ եւ Գէորգ Զօհրաբեան եղբայրների մօտ, որոնք իրենց սանին զարգացնում են Աւետարանի, ժամագրքի եւ Սաղմոսի գրաբար ու աշխարհաբար ընթերցանութեամբ: Այդ տարրական դպրոցով էլ փակւում է նրա ուսման ընթացքը: Այնուհետեւ նա ամբողջ 7 տարի բողոքական միաբնակարանի համար վաճառում է ս. Գիրք եւ սրահպանում իր գոյութիւնը: 1892 թւին ամուսնանում է Նոր-Ջուղայում՝ Օր. Մարիամ Գ. Արզաբեանի հետ: Որոշ ժամանակ նրան հարւածում է անդործութիւնը: Այդ շրջանումն էլ նա թղթի վրայ դժած ծաղիկներն ու մանրանկարները փորագրում է փայտի վրայ եւ ներկայացնում իր կնոջը, որի գնահատութիւնն ու խորախուսանքը նրան ներշնչում են նոր եռանդ եւ հրահրում նրա հոգում արւեստի սէրը: Այդ օրւանից էլ նա վրձնում է իրեն ամբողջապէս նւիրել փայտափորագրութեան մշակոյթին: Բնորոշ է եւ այն, որ նա ո՛չ մի փորագրիչ-քանդակագործի մօտ չի սովորում, ո՛չ էլ որեւէ դպրոց է յաճախում: Իր բնածին ձիրքը մշակում է նա ինքնաշխատութեամբ եւ շնորհիւ իր յամառ, տոկուն կամքի եւ անվրձատ աշխատասիրութեան՝ հետզհետէ



Ծագիկ պատուանդաններ (ընկուզենու և տանձենու փայտից)

նրբացնում, խորացնում է իր արւեստը եւ հասցնում զեղարւեստական որոշ բարձրութեան:

— Ո՛չ մի ուսուցիչ չեմ ունեցել. փորագրութեան, քանդակի անասման սէրը միայն ինձ եղել է առաջնորդ, — ասում էր նա ինձ Նոր-Ջուղայում, — եւ ես ինքնաշխատութեամբ կարողացել եմ յառաջադիմել ու զարգանալ:

Իր 35-ամեայ գործունէութեան ընթացքում արւեստագէտ-փորագրիչ Ջօհրարեանն ընկուզենու եւ տանձենու պինդ փայտերի վրայ գծադրել ու փորագրել է մէկը միւսից նուրբ մանրանկարներ, որոնք իրենց բովանդակութեամբ ու ոճով միանգամայն ինքնուրոյն են եւ իրենց վրայ չեն կրում որեւէ դպրոցի դրոշմը: Նա զեղարւեստական նորութեամբ ու ճաշակով քանդակել է դիւստորապէս լուսանկարների եւ պատկերների համար զեղեցիկ շրջանակներ, մեծ ու փոքր զարդատուփեր, ծաղկամանի պատւանդաններ, եկեղեցու Աջի աթոռներ, զեղարւեստական սրահներ, նուրբ շրջափակներ, որոնց դարձրել է առանձնապէս ծաղիկների, վարդերի, խաղողի ողկոյցների, թռչունների, կենդանիների, ձկների եւ այլ սիմուլիկ մանրանկարներով: Նոյնպէս մի կտոր փայտից փորագրել է կենդանիներ — ձի, եղջերու, առիւծ, — ինչպէս նաեւ թրուչուններ — արծիւ, սոխակ, արագիլ, երբեմն արագաղ: Քանդակել է նաեւ մարդկային տիպեր ու դէմքեր՝ իրենց ուրոյն դժերով: Պատրաստել է նաեւ օձադուլիս թռչնադուլիս, կամ ձկնադուլիս ոլորուն ձեռնափայտեր:

Ջօհրարեանի էական յատկանիշներից մէկն այն է, որ նա իր արւեստին նւիրել է մի առանձին սիրով եւ բարեխղճութեամբ: Իւրաքանչիւր պատկերաքանդակի վրայ աշխատել է յաճախ ամիսներով: Այդ է պատճառը, որ նրա փորագրած մանրանկարներն ու զարդապատկերները դնահատել են բարձր արժէքով: Նրա նրբաքանդակ տուփերը իր ժամանակին վաճառւել են 800 — 900 եւ 1000 բիալ, իսկ ծաղկազարդ, վարդազարդ, ողկոյզազարդ եւ այլ ոճով ու ֆիգուրներով փորագրած նկարների շրջանակները ծախւել են 200 — 300 եւ 500 բիալ: Այժմ նրա մի լուստոյն

վարդազարդ ու թռչնազարդ փորագրութիւնը գտնւում է Նոր-Ջուղայի «Ս. Ամենափրկիչ» վանքի թանգարանում, իսկ միւս նուրբ քանդակները զարդարում են Թէհրանի, Շիրազի եւ Սպահանի հայ ու իրանցի բաղմաթիւ արւեստասէրների հիւրասենեակները:

Այժմ ընդդէմը Ջօհրարեանի քանդակների հիմնական գծերը: Նա իշխում է փորագրութեան արւեստի բոլոր նրբութիւններին: Այդ է պատճառը, որ նրա քանդակած մանրանկարներն ու զարդապատկերներն իրենց բովանդակութեամբ ա՛յնքան բաղմազան են եւ զրաւում են ձեզ իրենց զեղարւեստական ուրոյն կերտածքով ու ոճերով: Դա ժամանակի ընթացքում աստիճանաբար մշակւած եւ որոշ կատարելութեան հասած մի արւեստ է, ուր տեսնում էք ո՛չ միայն պարզութիւն, նրբութիւն ու հարազատութիւն, այլ եւ սքանչելի համաչափութիւն, մանաւանդ մաքրութիւն, դժեր, որոնք կազմում են փորագրական արւեստի հիմնական յատկանիշները:


Արձանագրենք մի էական հանգամանք եւս: Ջօհրարեանն օժտւած լինելով գծադրական-փորագրական բնածին ձիրքով եւ վառ երեւակայութեամբ, նիւթերի բովանդակութիւնը, իդէան ինքն է յօրինել եւ իւրաքանչիւր քանդակին տւել է զեղարւեստական ուրոյն ձեւ ու կառուցւածք: Այդ տեսակէտից էլ նրա արւեստի ոճը միանգամայն ինքնատիպ է եւ իր էութեամբ արեւելեան: Եւ թերեւս այդ է պատճառը, որ նրա զարդանկարները գրաւում են նոյնիսկ օտար արւեստագէտների ուշադրութիւնը: Դեռ 90-ական թւականներին ռուսական կառավարութիւնը, բարձր գնահատելով նրա արւեստը, առաջարկում է իրեն՝ ընտելութիւն հաստատել Պետերբուրգում եւ աշխատել պետութեան համար: Այդ նպատակով էլ նշանակւում է բարձր աշխատավարձ, բայց նա իր կնոջ հիւանդութեան պատճառով չի կարողանում պայմանաւորւել: Այժմ նրա փայտափորագրութեան արւեստի մասին ձեզ աւելի ցայտուն դադափար տալու համար այստեղ առաջ ենք բերում մի քանի քանդակների լուսանկարները:




Նկարի շրջանակ (տանձենու փայտից)



Չարդատուփ (ընկուզենու փայտից)



Չարդատուփ (ընկուզենու փայտից)



Նկարի շրջանակ (ընկուզենու փայտից)



Փորագործիչ — դժագործիչ Չօհրաբեանը յետագայ շրջանում անում է մի նոր նախաձեռնություն : Պատրաստում է նաեւ արեւելեան դործիական երաժշտութեան պատկեր կազմող նախագիծերից մէկը : Դա քառն է, որի նուրբ լարերն ա՛յնքան հարադատութեամբ արտայայտում են արեւելքի հին-չիններէի բոլոր նրբութիւնները՝ իրենց դունազեղ երանգներով : Թառի արեւստը, անկասկած, նա չի կարողանում հասցնել այնպիսի բարձրութեան, ինչպէս Նոր — Զուղայեցի Եսայիայ խանը (Յովհաննէս Արգարեանը), որի պատրաստած ամէն մի թառն այժմ գնահատւում է 1000 — 1500 ռիալ, մի հանդամանք, որը բացառիկ երեսօթ է Իրանում եւ ինքնին ընտրուում է նրա քանդակած թառերի ղեկարկատական արժէքը : Նոյնպէս յիշատակենք Նոր Զուղայեցի թառի վարպետ փորագործիչներ՝ Մելիքի Դանիէլեանին, Համբարձում Արգարեանին եւ մանաւանդ Յակոբ Հայրապետեանին, որ Նոր — Զուղայում յայտնի է ո՛չ միայն որպէս Քառ պատրաստող նուրբ արեւստագէտ, այլեւ այսօր նա առանձին հմտութեամբ կերտում է նաեւ արեւելեան երաժշտական նախագիծերից քեանմանչէ, սազ, սանթուր, դափ, իսկ արեւմտեան կիթառ, որոնք իրենց արեւստի նրբութեամբ կարող են մրցիլ եւրոպական արտադրութիւնների հետ :

Արտադրութիւնների հետ :

Բարսեղ Չօհրաբեանի պատրաստած թառերը եւս օժտւած են երաժշտական տէխնիկայի էական տեսանկյանով եւ ունին ղեկարկատական որոշ դժեր : Մինչեւ այժմ նա պատրաստել է հարիւրից աւելի սաղա-Փանաշի թառեր, որոնք այսօր հնչում են Թէհրանի, Սպահանի, Շիրազի եւ Իրանի այլ կենտրոնական քաղաքների երաժշտական համերգներում ու հաւաքոյթներում :

Միանք են, ահա, փորագործիչ-դժագործիչ Չօհրաբեանի ստեղծագործութեան հիմնական յատկանիշերը : Նրա լաւագոյն քանդակներից շատերը, որոնք այսօր փորագրական արեւստի ղեկեցկութիւններ են եւ իրենց նրբութեամբ գրաւում են ձեր ուշադրութիւնը, ո՛չ միայն ղեկարկատական արժէք են ներկայացնում, այլ եւ հայ նորագոյն փայտափորագրութեան ոճերի,

ուղղութեան, ձեւակերպումների եւ այլ կարեւոր հարցերի լուսարանութեան համար ղեկեցիկ նմուշներ են եւ, որ էականն է, այսօր ձեռք յատակ դադարաւոր են տալիս Նոր — Զուղայի փայտէ՛՛՛ ղեկարկատական քանդակների էութեան եւ նախաձեռնների մասին : Այդ տեսակէտից Չօհրաբեանը թանկագին ծառայութիւն է մատուցել հայ ղեկարկատին : Այս բնութիւնը յետոյ պարզ է մի հանդամանք, որ նա իր դարադանդակներով կարող է ուրոյն տեղ դրաւել փայտափորագրութեան մշակոյթի մէջ, որ կազմում է հայ ղեկարկատի պատմութեան մի կարեւոր էջը :

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

Յոնիստ

ԱՌ ՊԱԼԼԱՍ ԱԹԵՆԷ

Ա՛լ չկայ ձայն, ա՛լ չկայ երգ որ ստուերներէն դուրս քաշէ քեզ : Իր հինաւորաց իրիկունները մոռցած Ելլադան, քեզ լաւ եւս ուրանալու համար, Ակրոպոլէն հեռացաւ : Եթէ ձեռքերս անսուրբ են, ես ունիմ հողին քրմուհիի մը որ քու հողիդ վրայ Պառնասի ծաղիկներ կը թափթփի : Աւելի վեր քան սա քարերը քու լքուած պաշտամունքիդ, կը բարձրացնեմ իմ երիտասարդ պաշտամունքս, պայծառ ինչպէս ատուկեան ալիքներուն վրայ այլն Ապրիլի . քու ոտքերուդ տակ կ'այրեմ, ինչպէս խունկ մը անխառն, իմ ցաւս՝ քեզի ծառայելու համար շատ ուշ ծնած ըլլալու . . . :

... Կը լռէ իմ խորիստ արիւնս եւ՝ անոր հետ՝ այն բարկ կեանքը որ կը թաւալի երակներուս մէջ հրաւառ : Ես կ'երթամ ինչպէս ստուեր մը՝ նշմարանքներու մէջէն, եւ ձայնը որուն ալիւնջ կը դնեմ, ձայնն է իմ երազներուս . . . : Ո՞րն է այն ստեղծագործ ձեռքը որ դուն չպիտի սատուածացնէիր . Փիլիոս այն բնութեալն էր որ քու հողդ կազմեց : Ան քեզ անդուդական կամեցաւ, բայց ես քեզ կ'երազեմ հոյակապ քու անարատութեանդ չինական փարդերովը պսակուած անառի՛կ դիցուհի : Դարերու քերթութիւնն իր ջահն սպառեց, վերջին կարապը լռեց իր գերադոյն երգին

վրայ, բայց իւրաքանչիւր՝ ձեռք, առջեւէդ անցնելուն, ջահն նորէն կը վառէ, իւրաքանչիւր հողի քու պատերուդ մէջ ըստեւիք խօսքերը նորէն կը դառնէ : Ես սիրով ու հպարտութեամբ լեցուն յետամնացն եմ, որ քու անունովդ՝ ինչպէս Կեփիսի աղբիւրներով՝ իր ծարաւը կ'անցընէ . . . :

... Ակրոպոլի ինքնակալուհի՛, ինչպէս հերոսական օրերուն՝ քեզ այս անունով պիտի հռչակէի : Կ'ուզեմ քեզ տեսնել Պարթենոնիդ մէջ կանդուն, քու մարտական թենոնիդ եւ հանդարտ ուժովդ : Աչքերուդ մէջ պիտի վնասէի անհունութիւնը ծովերուն, ոտքերուդ տակ պիտի դառնէ քաղցրութիւնն առաւօտներու : Պիտի կաղձուկէր թափօրը Պանաթինեանց, քրմուհիներու խոստովուկ պատմութեանն, համեմանքներու անուշահոտութիւններով, մամանքներու անուշահոտութիւններով, նուաճաւոր ու կակուղ դառիթաւներ,

1918

Պ. Յ. ՔԻՒՐՏԵԱՆԻ

« Բանասիրական Գիտութիւններ »

Պատասխանելով այն երկու ճշգրտմաններուն զոր ըրած էի առանց զինքը մեղադրելու(1), այլ « ի սէր դիտութեան եւ ճշմարտութեան », ինչպէս վերնադրած էր իմ քաղաքութիւնը, Պ. Յ. Քիւրտեան անհաւատալի անխոհեմութիւն մը դործած է, ստիպելով իր « բանասիրական դիտութեան » հետ պարզել նաեւ իր մտաւորական սլարկեղծութիւնը :

Խօսելով Զաքարիա Ալուրեցիի Օրադրութեան վրայ, որ 1938ին հրատարակուած է Երեւան, Պ. Յ. Քիւրտեան յառաջ բերած էր հետեւեալ հատուածը .

« Թ՛վին ՌճԹԴ (1665) Երուսաղէմայ Եղիազար ոմն վարդապետ դուս եկաւ, եկաւ Լատամպօլ, սուլթան Մահմադ թաղաւորէն ամբը հանեց, թէ էջմիածնայ թէ մե-

տարտամ ու յամբահալ երաժշտութիւն մը երդչախումբերու . . . :

... Փոշին մէջ քու քամահրուած պաշտամունքիդ, ո՛վ Պալլաս, դշխոյ դահլնկէց, հողիս կը վերակազմուի : Ան ինքզինքը կ'երազէ բաղմապատիկ, ինքզինքը կը կամենայ անսահման, որպէսյի իր սէրը, անդուդական, քեզի պատուանդան դարձնէ . . . : Քու աւերակիդ վրայ յաղթական, խորհրդանշան մը ցցուեցաւ : Քու ոտանիդ սիրտը, լուծէն աղատած, այլ եւս դաղջ նայուածք մը լոկ ունեցաւ քու խաղիներուդ համար : Ժամանակը քեզ նորէն մեղի դարձուց, անճառելի՛ կոյս, խեղանդամ բայց հոր, կապուած բայց ճառագայթարձակ, ու չկայ մէկը որ՝ անցած ատեն՝ Պարթենոնին սեմը համբուրէ եւ չղդայ, Աստուածուհի՛, քու սաղաւնիդ օղին մէջ . . . :

(Flore attique)

Քրդ. Ա. ՉՊԱՆԵԱՆ

ԻՍԿԱՆԻ ՄԻՆԱՍԵԱՆ

ուն, թէ նվիրակ, թէ սեվալուրիս չի դան Ալի-Օսմանայ երկիրն(2) :

Այս տողերուն իմաստը շատ յատակ է : Զ. Ալուրեցի կ'ըսէ . « 1665ին, Եղիազար անուն վարդապետ մը Պոլիս եկաւ եւ սուլթան Մեհմէտէն հրամանագիր մը առաւ, որուն համաձայն էջմիածնին ո՛չ միւսուն պիտի բերուէր եւ ո՛չ ալ սեւալուրիս (վարդապետ կամ եպիսկոպոս) իբրեւ նուիրակ պիտի կրնար դալ Ալի Օսմանի երկիրը » :

Այս հատուածին առթիւ, Պ. Քիւրտեան ուրիշ դիտողութեան մը ետք, ըսած էր թէ տպագրիչ-հրատարակիչը(3) « ալիսյանի սխալ » մը թողած էր « չի դալ Ալի-Օսմանայ երկիրն », զոր պէտք էր ուղղել « չի դան ալ ի Օսմանայ երկիրն » (այսինքն « այլեւս չդան Օսմանի երկիրը ») :

Ըսած էի թէ Պ. Քիւրտեանի սրբադրութիւնը ճիշտ չէր բնաւ եւ Զ. Ալուրեցիի հրատարակիչը մասամբ միայն սխալած էր, եթէ կարելի է սխալ որակել ուղղադրութեան ընդհանրացած ձեւ մը : Այս վերջին նոխարապետութիւնը կ'ալիւնարէր պարսկական եւ արաբական յատկացուցիչ-

(1) « Բազմավէպ », սեպտ. հոկտ. 1947 :

(2) « Բազմավէպ », նոյն-դեկտ. 1946 :

(3) Տպագրիչը ի՞նչ դործ ունի հոս :